

ԱՎՃԱՆՈՒՄ ԿՐՈՒԹԻՒՆ
 Պուշկարիոյ համար
 Տարեկան 12 ժր.
 Վեցամսեայ 6 »
 Արտասահմանի հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 ժր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՅԻՎ ՎՃԱՆՈՒՄ

Իրանացի սուրբ առաջին
 ևրենսին համար 40 սակրիս
 է. իսկ վերջին ևրենսին հա-
 մար 20 սակրիս է. ևրեհեն
 աւելի սակրիսներու համար
 20 Ո՛ր զեղջ կրչայ :

Վառնայի համար ձեռքի 10 սակրիս

ՇԱՐՔԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱՔ ՕՐԵՐԸ

Նախկին և նոր գրիկ
 Խմբագրութեան հասցեին

Редакция на ввстникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)

Կրթութեան նախարարի

Արտասահմանի ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռքի
 < 15 ՍԱՆԹԻՄ >

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇ-
 ԽԱՒՈՐԵԱՆ ԱՕՅԻՄ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱ-
 ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՐՄԵՐՈՒՆ :

Տոմսակ գնել փափագողները կրնան
 իրեն գրել :

Զար-Պարիս փողոց Վառնա

ԶԵԿՈՅՑ

Պատիւ ունինք յայտարարելու թէ՛
 Տիկին և Տիար Զօրեանցի հիմնադ-
 րած վարժարանը իր երկրորդ տարե-
 շրջանը պիտի սկսի յառաջիկայ Սեպ-
 տեմբեր 3 ին, այս անգամ բարձրա-
 դոյն երկուսն նախակրթարանի մը
 լայն ու մշակեալ ծրագրով : այնպէս
 որ այս դպրոցէն ելնող աշակերտները
 պիտի կրնան պետական կրթութեան
 ընդունուիլ : Վարժարանը ունի
 նաեւ իր կանոնաւոր մանկապարտե-
 ղը :

Վարժարանի ուսուցչական խումբը
 արդէն կազմուած է. որ իր մշակած
 ծրագրի, իր ընդունած մանկավար-
 ժական ուղղութեան և կազմակեր-
 պութեան մասին հարկ եղած ծանո-
 թութիւնները պիտի տայ հասարա-
 կութեան, Սեպտեմբերի սկիզբները
 մտնաւոր հրատարակութեամբ մը :

Իրենց զաւակները արձանագրել
 տալ ուղղող ծնողներէն կը խնդրուի
 որ Օգոստոս 10 էն սկսած հաճին վար-
 ժարանիս ուսուցիչներէն Տ. Կ. Պրոն-
 Եանի գրիմել և անոր հետ բանակցիլ
 պայմաններու մասին :

Ուրիշ քաղաքներէ ևս աշակերտ
 կընդունինք, զանոնք պատուաւոր
 ընամանիքներու մէջ սեպտեմբերու և
 անոնց վարք ու բարքին վրայ հակե-
 լու հոգը ստանձնելով :

ՈՒՍՈՒՎ ԶԱԿՍՆ ՄՍՐՄԻՆ

Հասցէ

G. Bionian Instituteur — Philippople

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Sof. Վ. Տոսուկանցի և Ե. Թոփչեանցի
 «Die sozial-ökonomisch Türcei»

Հաւաքական աշխատութիւնը Հայ-
 կական հարցի և ընդհանրապէս
 Թուրքիայի մասին :

Դիւնը 2 մարկ ճանապարհածախով
 գրիմել Berlin, Verlagshandlung
 R. Prager, №W. 7

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԵՒ ԹԵՐԹԵՐԸ

Մեր մէջ լրագիր կարգացող-
 ները առհասարակ չեն հետաքր-
 քրուիր իրենց կարգացած թեր-
 թին ուղղութեամբ, քարոզած
 սկզբունքներով, հետեւած ծրա-
 գրով, ու թերեւս չեն կրցած ալ
 տակաւին գիտնալ, համոզուիլ թէ՛
 ու է թերթ իր անուան ու կոչու-
 մին համապատասխանելու հա-
 մար, պէտք է իր անխախտ սկզ-
 բունքներն ունենայ, իր որոշ
 ծրագրով՝ որուն համեմատ գոր-
 ծէ, գրէ, խօսի և կարենայ իր
 ըմբռնած կերպով դէպի լաւա-
 գոյնը բարեշրջում մը յառաջ բե-
 ռել այն հասարակութեան մէջ,
 որուն ինք կը պատկանի : Քանի
 մը եւրոպական թերթերէ թարգ-
 մանուած լուրեր, առդիէն ան-
 դիէն հաւաքուած քանի մը քրո-
 նիկներ կը բաւեն մեր հասա-
 րակութեան ընթերցասիրական
 ճաշակը գոհացնելու համար, որ
 շատ նրբացած ալ չէ և կարգու-
 ցած լուրին հինին նորին ալ չի
 նայիր բարեբախտաբար ըսնիք
 թէ դժբախտաբար : Իսկ մարտած
 կամ չի մարտած գաղափարներուն
 գալով, այնքան անտարբեր է ա-
 նոնց մասին որ երբեք չի կրնար
 նշմարել թէ, շատ անգամ, վերի
 կարգացածը վարիին կը հակա-
 սէ, կամ երեկուան քարոզուածը
 այսօր կը ժխտուի միեւնոյն ան-
 գոյն թերթին մէջ, նոյն անձին,
 նոյն գրողին, նոյն խօսողին կող-
 մէ :

Ուստի ամենամեծ հրճուանքը
 կունենանք, երբ, այդ անտար-
 բեր ու քիչով գոհացող մեծա-
 մասնութեան քով, մերթ ընդ
 մերթ կը հանդիպինք այնպիսի-
 ներու, որոնք այդ ընդհանուր
 շղթան կը խորտակեն, կուզան
 ուղղակի իրենց ձեռքը դնել
 թերթին սրտին վրայ, քննադա-
 տել անոր ուղղութիւնը, մատ-
 նանշել անոր շեղումները, և կամ,
 քաջալիքել անոր օգտակար քայ-
 լերը :

Ասիկա ոչ միայն հասարակու-

թեան արթննալուն, զարգանա-
 լուն և նոր պէտքեր, նոր պա-
 հանջքներ ստանալուն նշան է,
 այլ օգտակար է և ուրախալի ա-
 նոր համար որ թերթերու վա-
 րիչներուն համար ալ ուղեցոյց
 մը կըլլայ յաճախ, որ միշտ կը
 ցուցնէ թերթին ընթանալիք
 ճամբան և թոյլ չի տար որ ա-
 նիկայ շեղումներ ունենայ հրա-
 պարակային պայքարի կուրացու-
 ցիչ յափշտակութեան մէջ :

Այս փոխադարձ հսկողութիւնը
 հասարակութեան կողմէ իր թեր-
 թերուն վրայ և թերթին կողմէ
 իր պատկանած հասարակութեան
 վրայ, ամենէն ապահով ու օգտա-
 կար միջոցն է բարեխառութեան,
 ազնուացումի ու յառաջգիմու-
 թեան, եթէ երկուստէք անկեղ-
 ծութիւնը իբր պերագոյն սկզբ-
 բունք ընդունուած է և անհա-
 տական կամ կողմակի հաշիւներ
 մուտ չեն գտած տիրող փոխա-
 դարձ յարաբերութեանց մէջ :

Որովհետեւ, պէտք է խոստո-
 վանիլ որ միայն թերթերը չեն
 միակողմանի գատող կամ անհա-
 տական հաշիւներով խօսողը : Հա-
 սարակութիւնն ալ կամ հասարա-
 կութեան մէջ ու է բարոյական
 գիրք մը ձեռք բերած անձն ալ,
 շատ անգամ, թերթի մը, նոյն-
 իսկ իր սիրած թերթին կը վե-
 րաբերի անհատական հաշիւնե-
 րու գիտակէտով, սեպհական
 կիրքերու ազդեցութեամբ ու շա-
 հերու բերմունքով, ու կը պա-
 հանջէ որ թերթը անպայման
 գովէ ինչ որ իր հաշույն լաւ է և
 նպատաւոր : Աւերք թերթը չի
 հետեւիր այդ պահանջին, չի
 գոհացնէր զայն, իսկոյն դժգո-
 հութիւնը կը սկսի որ քիչ քիչ
 կը խոշորանայ և օր մըն ալ հա-
 կափրօփականտի կը փոխուի :

Այս պատճառաւ, քանի որ
 բուն հասարակութիւնը դեռ իր
 յոտակ ու որոշ համոզումները չէ
 կազմած և չի կրնար գրուածը
 բաղդատել զայն խեղաթիւրողին
 եզրակացութեանց հետ, քանի որ
 չի կրնար իր սեփական ողջ-
 մտութեամբ առաջնորդուիլ և ա-
 սոր անոր ազդեցութեան ենթա-
 կայ է, պէտք է որ թերթերուն

վարիչներն ալ շատ զգոյշ ըլլան
 և վերջին ծայր վերապահու-
 թեամբ ընդունին իրենց կղած
 նպատաւոր կամ աննպատա քըն-
 նագատութիւնները, փնտռեն,
 պրպտեն թէ ատոնց մէջ արգեօք
 գոյութիւն չունին հին կամ նոր
 կիրքեր : կա՞րանցեալէն մնացած
 հաշիւներ, որոնք հետզհետէ
 խմորուելով պիտի գան պայթիլ
 աս կամ ան ազդեցութեան տակ :

Ասիկա պէտք է հասարակու-
 թիւնը չի շփացնել և անոր տկար
 կողմերը չի փայտայելու համար,
 պէտք է նաեւ անոր համար որ
 թերթերը տիրող ամէն վատ հո-
 սանքէ չի մղուին և հասարակա-
 կան թոյլ ու մեղկ բարքերուն
 հայելին չըլլան, փոխանակ զա-
 նոնք շտկել ջանանալու :

ՇԱՀԱԳ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՇ, 10 Յուլիս

Արդէն գիտէք որ Իսենցի^(*) Ըլտ-
 աւամամանի տղայ, Խալիլ էֆ. 15-16
 տարիներէ ի վեր ոպէլէտիլէ ըէ-
 իսի^(*) ըլլալով՝ ազատ համարձակ
 կը շահագործէ բնակիչները ա-
 մենայն անխղճութեամբ : Մինչև
 այսօր ոչ Հայոց, ոչ Տաճիկնե-
 րուն մէջ գտնուած չէ մէկը որ
 գիտողութիւն մը ընել համար-
 ձակի, որովհետեւ՝ կառավարու-
 թիւնն ալ ինքն է, ոճրագործն
 ալ ինքը :

Այս անսիրտ մարդը, ու է
 պատիժէ վախ չունենալով, սկսած
 է Մշոյ հայ գիւղերը ամենաշըն-
 չին պատճառներով քար ու քանդ
 ընել, առանց բացառութեան բո-
 լոր բարեկեցիկ ընտանիքները և
 հարուստ գերգաւտանները վեր-
 ջին թշուառութեան մատնելու
 ջանալ : Այդ գազանին ձեռքով
 թշուառացածներուն թիւը այ-

(*) Մշոյ տաճկութիւնը չորս գեր-
 գատանի կը պատկանի : Քոթանենց,
 Իսենց, Զիշմիկիլի, Թոփալենց : Այս
 ցեղերը շատ անգամ իրարու հետ կրո-
 ուի բռնուելով գիրար կը ջարդեն :
 Հայոց բաղդը այս չորս ցեղերէն կա-
 խում ունի :

սօր 1000ի կը հասնի. Այս 4-5 տարիներու մէջ գործած ան- գթութիւնները խօսքով չեն բա- ցատրուիր, երկրորդ ձինկիլիսան մըն է դարձեր Մուշի Հայոց հա- մար:

Սակայն մտքերնուս անգամ չէր անցներ որ ֆէտայի եղբայրները խիստ մօտէն կը հսկէին սպիւ վայր- բենիին սիրագործութեանց վրայ և յարմար առնելին կը սպասէին վրէժ լուծելու համար: Երբ այդ ժամանակը եկաւ, ո՛չ կառավա- րութիւնը, ո՛չ կազմակերպեալ բանակները կըրցան այդ գազա- նին կեանքը փրկել. յեղափո- խական զինակն ու գաշոյնը վերջ տուին գազան կեանքի մը. անոր սատակումը սարսափ ձգեց իր բոլոր արփանեակներուն մէջ և ուրախացուց թշուառ Հայերը: Երբեմն հազարաւոր արտաւար հոգերով չի կշտացող այդ հրէջը, հիմայ երկու կանգուն հողով բա- ւականացաւ:

Իսկ կառավարութիւնը սար- սափահար, իր սովորութեան հա- մեմատ սկսաւ ամէն կասկածելի հայ գիւղերու մէջ ձերբակալու- թիւններ ընել, յուսալով որ կըր- նայ պահուած ֆէտայիները գրտ- նել: Ու անա Մշոյ բանտերուն՝ մէջ լցուեցան մօտ 350-400 բան- տարկեալներ, քանի մը արգէն կիսաւեր գիւղեր թրքաց ու քիւր- տերու աւելումներուն ենթար- կուեցան, մարդիկ սպանուեցան, որոնց 4ը Գուրաու գիւղէն, 2ը Վարդխաղէն, 2ը Ավզուտէն, 4ը Արախէն:

Մուշը, որ երբեմն գրախտի մը տպաւորութիւնը կը ձգէր ճամբորդին վրայ, իր բազմա-

նան ծաղիկներով, երգնագիյ թռչուններով, անհատում կար- կաչահաս գետակներով և զուարթ ու երջանիկ բնակիչներով, այ- սօր պատերազմի տխուր դաշտ մը կը ներկայացնէ, ուր անթիւ փտած զիակները կը նեխեն և օդը կապականեն, ջինջ գետակ- ներուն տեղ մարդու արիւնը կը հոսի, աղքատութիւն ու թշուա- ռութիւնը ամէն կողմ կը թագա- տորէ, բայց վայրագ կառավա- րութիւնը անընդհատ կը շարու- նակէ իր կեղեքումները իր հա- յաջին ծրագրերը գործադրելու համար:

ՊՈՐԻՍ ՍԱՐԱՓՕՓԻ

ԵՒ

ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ԴԱՍԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս կը յիշեն ընթերցողները, անցեալ տարի Պուքրէշի մէջ տեղի ու- նեցան Միխայէլիանօսի եւ Ֆիթօվըս- քիի սպանութիւնները Սթ. Տիմիթ- րովի եւ Պօյո իլիէվի կողմէ, որոնք յիշեալ անձերուն թուրք կառավա- րութեան լրտեսները եղած ըլլալուն համագումար չէին կրցած անտարբեր մնալ և որոշած էին զանոնք սպան- նելու. ինչպէս որ ըրին ալ:

Ռուսները կառավարութիւնը թէեւ կըրնար առանձին այդ սպանիչնե- րուն պէտք եղած պատիժը անօրինել, բայց եւրոպական շղթանագիտու- թիւնները գրգռուած, որ Մակեդ. Կօ- միտէին յառաջացման մէջ կը տեսնէր պալքանեան թերակողմի խաղաղու- թեան խանգարումը. մեծ կարեւո- րութիւն տուաւ այս գործին, որուն մէջ կը մեղադրուէր ուղղակի Մակեդ. Կօմիտէն:

Արդէն եւրոպական այդ անարգ գիւտագիտութիւնը, որ երբէք յե- ղափոխական կօմիտէներէ չախորժիր, պատճառ մը կը փնտաէր իր զգուշի միջնորդութեամբ Մակեդ. Կօմիտէին գործունէութիւնը չէզոքացնելու հա- մար: Ինք չէր կրնար ուղղակի յար- ձակել կօմիտէին վրայ. որ հիմնուած էր տեղական օրէնքներու վրայ, Ուստի Պուքրէշի սպանութեանց մէջ յարմար սովոր գտած կարծեց և սկսաւ ամէն տեսակ միջոցներով կօմիտէն վարկաբեկ ընելու աշխատել: Ռուսները թերթերը դարձեալ այդ գի- ւտագիտութեան գրգռում, սաս- տիկ կատաղութեամբ սկսան երկու դրացի տէրութիւններու, երկու քոյր ժողովուրդներու խաղաղու- թիւնը խոզել: Խնդիրը մինչեւ այն սատիճան հասաւ որ, երկու տէրու- թեանց մէջ պատերազմի մը ծագու- մը պահ մը անխուսափելի եղաւ: Ռուսները կառավարութիւնը այս գոր- ծին մէջ ինքզինքը վերաւորուած համարելով, իրարու ետեւէ նօթա- ներ կը զրկէր Պուկար կառավա- րութեան եւ անկէ գոհացում կը պահանջէր: Ռուսները պատարանները մահուան դատապարտեցին կօմիտէի նախկին նախագահը, Պորիս Սարա- ֆօֆ և իր ընկերները, որոնք զըլ- խաւոր յանցաւորները կը համարու- էին:

Վերջապէս Պուկար կառավարու- թիւնը խոստացաւ պէտք եղած գո- հացում տալ: Կօմիտէն խուզարկուե- ցաւ Սարաֆօֆ և ընկերները ձեր- քակալուեցան և դատի ենթարկուե- ցան: Կառավարութեան այս քայլը կըրնար անեղ իրարանցում մը առաջ բերել արդիին մէջ, բայց դեռ ժո- ղովուրդը անորոշ դրութեան մաս- նուած էր, ու կը սպասէր խնդրին վախճանին. անիկա լարուած չիղե- րով կը դիտէր կառավարութեան բռնած դիրքը, ու իր մէջ խմորուող զայրոյթը պիտի պայթէր այն տեսն, երբ կառավարութիւնը օր մը ձեր- քակալուածներուն կեանքին ալ զըպ- չելու համարձակութիւնը ունենար:

Դատի խնդիրը շատ երկար տեւեց, մինչեւ որ ընտրուած քննիչ յանձ- նախուժը կըրցաւ լաւ մը տեղակա- նալ գործերուն, և մինչեւ որ Սօ- ֆիայի ընդհ. դատախազը լաւ մը ու- սուլիստիբեց ձերբակալուածներուն ամբաստանութիւնները: Վերջապէս, Յունիս 26ին ընդհ. դատախազին ամ- րաստանագիրը հրատարակուեցաւ, որով այս վերջինը կը պահանջէր Պօ- րիս Սարաֆօֆի և Սօֆրօնի Սթօ- յանօվի մահուան դատապարտումը, իրրեւ Գիրիլ Ֆիթօվըքիի սպանու- թեան թեւադրիչներ, և Վլախովի Գօվաչէվի ու Տիմիթր Թրօլէվի խիստ բերդագրելութիւնը:

Այս լուրը կայծակի արագութեամբ Պուկարիոյ ամէն կողմը և բոլոր արտասահմանի մէջ տարածուեցաւ: Բայց, ոչ մէկ տեղ մեծ արձագանգ գտաւ ան, որովհետեւ ընդ. դատա- խազին ամբաստանագիրը ոչ մէկուն համար անակնկալ մը չէր, բայց դեռ կը մնար դատարանը, որ գործին վերջնական վճիռը պիտի տար:

Դատաւարութեան օրը կը մօտե- նար. Սթիլիէի փաստաբաններէն Տօքթ. Նէյոֆ, հրաւիրագիր մը ուղ- ղեց բոլոր Պուկարիոյ փաստաբան- ներուն, որպէսզի յանձն առնեն դա- տապարտուողներու պատպանու- թիւնը: Տ. Նէյոֆի կողմէ լսուեցաւ Պուկարիոյ ամէն կողմէն և բազ- մաթիւ փաստաբաններ փափաք յայտնեցին անմեղ ամբաստանեալնե- րուն պաշտպանութիւնն ստանձնե- լու:

Դատը պիտի տեսնուէր յուլիս 30ին և փաստաբանները հետզհետէ Սօֆիա կը հաւաքուէին: Նոյն օրը Սօֆիայի ժողովուրդը իրարանցումի մէջ էր և ամէն ոք կը փափաքէր ներկայ գրա- նուել այդ տարօրինակ դատին: Ժո- ղովուրդը սակայն ստիպուած էր դուր- սը կենալ, դատարանին սրահը խիստ փոքր ըլլալուն համար: Առաջին և երկրորդ օրը դատարանը զբաղեցաւ վկաներու հարցաքննութեամբ, իսկ երրորդ օրը սկսաւ բուն դատաւարու- թիւնը: Տեղի անձկութեան պատ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿՐ ԽՂՃԱՆ ՈՉ ԿՐ ՍՈՒՆԵՆ

XIV

(Շար. նախորդ թիւին)

1876ի յուլիս ամսին Սերպ-Թըրք- քական պատերազմին նախընթաց օրուան երկուրորդ օրը մէջ, Լա- պէս սրճարանը, սեղանի մը վրայ եւրոպական օրաթերթեր գիղուած էին և շուրջը քանի մը պուկարներ նստած կը խօսակցէին:

Բուսանացիներ, հրէաներ, ֆրան- սացիներ, գերմանացիներ և ուրիշ օտարներ սեղաններու շուրջը բոլոր- ուած էին, մէկ քանին քաղաքական թօսակցութիւններով զբաղուած էին, մէկ քանին աչքերնին եւրոպական թերթերուն յոտած կը կարդային առջեւին գարեջուրի գաւաթներով: Ամբողջ հասարակութիւնը սերպ և թուրք անխուսափելի եղող պատե- րազմին վերջին խոռովի լուրերովը կը զբաղուէր:

Եթէ մէկը այս սեղաններու շուր-

ջը դարձող վիճարանութիւններուն տկանջ տար, մէկէն պիտի ըմբռնէր որ բոլոր այս օտարականները թուր- քերուն կը համակրէին: Եմէնքն ալ ուրախութեամբ կըսպասէին այն ժամը, երբ փոքրիկ Սերպիան որ սահ- մանագլուխը խոնուած էր, Ապտիւլ- Բէրիմ փաշայի անաւոր ուժերէն պի- տի ջախջախուէր: Նախասական ու վերաւորիչ բացազանչութիւններ կը յուսէին սերպերու և սլաւներու նկատմամբ:

Միայն փոքրիկ պուկար շրջանն էր որ կը համակրէր և ուրիշ կերպ կը մտածէր:

— Վերջին լուրերուն նայելով, Սեր- պիա հիմակուհիմա 100,000 զինուոր ունի, եթէ իրաւ է, աս քիչ բան չէ ըսաւ, հաստ, սեւամորթ ու փոքրիկ սրածայր մօրուքով պուկար մը, ո- րուն ցիլիիարը, շքեղ հագուստը ու ճարպոտ գիրութիւնը յայտնի կը վկա- յէին անոր հարուստ քաղաքացեա մը ըլլալը:

Նա Կարալէլովի Պուքրէշի տի- պերը կը յիշեցնէր:

— Եթէ զօրապետ Չէրնաէվը ալ ա- սոր վրայ աւելցնենք, աւելցուց խոր մտածող գեղահաս պատանի մը այ- տին վրայ նորագոյնուած վերքի սպիով մը և աչքերու ապուշ արտայայտու- թիւնով: Աս ալ շքեղօրէն հագուած էր:

— Ամսնս Հալիս կը տեղեկացնէ, որ Ռուսիա իր զինուորներու սպա- ռազիտութիւնը սկսեց է Պեսարպիոյ մէջ, և ռուս կամաւորները անգին թուով սկսեց են դէպի մեր կողմերը գալ: Ռուսիա ամէն պարագայի մէջ չի պիտի ձգէ Սերպիան երկաղացուց երկրորդ վիճարանող մը, որ երե- սուն տարեկան, չոր, մեղամաղձոտ բայց համակրելի դէմքով երիտա- սարդ մըն էր:

— Հիմա ո՛ւր են մեր չարքանները Գործի մէջ տեսնամ ասոնք... Հի- մակ տեսնենք անոնց ազգային զգա- ճութիւնները... Ամբողջ ձմեռը ականջ- նիս խլացուցին, ըսաւ թթու դէմ- քով մը առջի վիճարանողը ու քանի մը անգամ ուժով հաղալով:

Ճաթած այտով ու աչքերու ապուշ արտայայտութիւնով երիտասարդը ե- րեք անգամ իր գլխովը նշան մը ը- րաւ:

— Ես ալ երէկ տիրջս միեւնոյնը կըսէի Պարոն Կրօպով: Ամէնքն ալ քարերու տակ պիտի պահուէրին, ո՞վ գիտէ աս պարծենկոտ քաջերը որ ծակուծակներ պիտի սպրդին, կա- կարելի է ըսել որ Սերպիան էն մեծ յոյսը պուկարներուն վրայ է:

— Ո՞ր մնաց իրենց յեղափոխու- թիւնը: Շարունակեց Պ. Կրօպովը, քամի: Միայն հարիւր հազար ան-

մեղները մորթել տուին աս սրիկա- ները... մնտեցին ձգեցին, մէկու մը հարցուցին երբ յեղափոխութիւն կընէին:

Եւ Պ. Կրօպովը խոտուեցաւ:

— Երեւակայեցէք, ըսաւ ճաթած այ- տով ու աչքերու ապուշ արտայայտու- թիւնով երիտասարդը, երէկ չէր, անցեալ օրը գրաւենեակ կուգայ Մա- ղէտօնսքի անուն մէկը անարգ սրի- կայ մը... Ինչ կը փնտես, կը հարցնեմ... կըսէ Սերպիա կամաւոր գացող քանի մը աղքատ հայուկներ- րուն համար օգնութիւն կուգեմ... Հա՛, հա՛, հա՛ մտիկ կընե՞ս, սրիէայ Մաքէտօնսքի մը օգնութիւն կը խնդրէ աղքատ կամաւորներուն հա- մար... իրաւ է որ աս խայտառակ մարդիկը, խաբէլին ու ստեղէն չին ամչնար եղեր: Սասնակներ, Սղոտո- ներ:

— Սրիկաներ, նոյն վայրկեանին պէտք էր դուրս վճնել, ըսաւ Կրօ- պովը արձամարհական ձեւով մը, եւ թքաւ:

— Սրիկաներ և անհրեաներ ալ է՛, դրօ՞մ տուիք, որ երթայ խողի պէս գինեառներ խմէ:

Ճաթած այտով ու ապուշ նայուած- քով երիտասարդը ծաղրական ժպի- տով գլխովը դէպի ձախ ուսին նշա-

ճառաւ ըրոր փաստարանները չի կրցան ներկայ գտնուիլ, եւ որոշեցին իրենց կողմէ երեք հոգի, որոնք աւելի ձեռնհաս էին գործին. ասանք էին Տօքթ. Կէնատիկը, Մալինով եւ Բէշէվը, որոնք մեծ վարպետութեամբ կարողացան, հակառակ բնոյճի, դատաւարին պնդումներուն, համոզել զատուորները իրենց պաշտպանականութեան անհրաժեշտութեան: Ամէնէն վերջը, խօսեցաւ ինքը, Պօրիս Սարաֆօֆ ներկաներուն առջեւ պարզելով Տաճկաստանի քրիստոնեաներուն վիճակը:

Սարաֆօֆի խօսքը աւարտելէ ետքը, դատաւորները քաշուեցան խորհրդակցութեան եւ քիչ ետքը իրենց վճռագիրը կարդացուեցաւ, որով Պօրիս Սարաֆօֆ եւ իր ընկերները անպարտ կարծակուէին: Դատարանին նախագահը ոստիկաններուն դատաւրով հրամայեց որ ալ ազատ թողուն բանտարկեալները:

Այսպէս վերջացաւ ազմկալի խնդիրը որ կէս տարիէ աւելի հրապարակը խորտակեց: Այսպէս խորտակուեցաւ յուզեալ աւրոխին խանդավառ համակրութեան առջեւ՝ անդ զաւարտութիւնը պաշտօնական քաղաքակիրթ աշխարհին, որ քանի մը անձնագործ կտրիճներու կեանքը մութ բանտերու մէջ կուզէր թաղուեցնել եւ չարչարուող ազգութեան մը գերագոյն կուրծը դեռ չի ծագած կուզէր խեղդել: Բայց ժողովուրդը սպասուական ձայնը քարձարացուց, եւ պաշտօնական աշխարհը ստիպուեցաւ լռել մեծագոյն շարիքի մը վախճան սարսփահար:

ՅՈՅԱԸ

(ԲԱՐԻ ՈԳԻ ՍԸ)

(Շար. Անի, քիւն եւ վերջ)

Կեանքի այս զանազան յուսարտութեանց մէջ իսկ մահական, երկտասարդին եւ ձեռնուրիին քովէն չի հեռանար յոյսը: Գիւղացին գարնան

նակելի շարժում մը ըրաւ, որով Ըսեկ կուզէր «կը զարմանամ խելքիդ, առաջի սլ զիւրութեամբ խարուող կարծեցի՛ր զիս»:

— Իմ կարծիքով, անոր հետ մարդասերբար չի վարուեցար, շատ վատ ներկայացուցիք զինքը: Աղան արդէն քիչ մը զայրացած էր, զայն լաւ յանդիմանեց... գրտե՛ս շատ խղճացի սա թշուառը, երբ գուրս ելաւ, ըսաւ միւլամաղձոս համակրելի զէմքով երիտասարդը, որ միւսին հետ միեւնոյն գրասենեակը կաշխատէր:

— Այդ տեսակ լիբրերուն մեղքնաւը չարժէր ըսաւ ճաթած այտովը. անոնք փողոցը քեզ սպաննելու պատրաստ են... Ամբողջ աւազակներու խաժամոժ մը... Մարդ ամօթ կը համարի անոնց պուլկար ըսելու:

Չորրորդ պուլկարը որ մինչեւ այդ աստի լուծութեամբ թան լրագիրը կը կարգար, շուտ մը թերթը սեղանին վրայ դրաւ, իսկոյն գոյնը նետեց եւ այս վերջի խօսքերը արտասանողին սուր նայուածք մը նետելով, դողող զացող ձայնով մը ըսաւ:

— Պարոն այդ վատարող զոհերը այդպիսի անխղճօրէն մի ցեխտէք: Յիշեցէք որ Մաքէտոնսօֆին Պուլկարի մէջ կրուած է... Ճաթած, այտով ու սպուռ արտա-

դաշտ կերթալ ու սերմերը կը ցանէ: Մեր պարտիզպանն ու պարտիզպանուհին կաշխատին շարունակ բոյսեր անկելու: Բողբոջներն ու ցողերը կանին, կողոնները կը բացուին ձառներուն վրայ, Հունձքը արդէն իրենց մտքին մէջ կը ծայտի: Բայց անպակուցալ զիչերային եղեամբ, կատաղի փոթորիկը, անա կարկուռը կը տեղայ ու կը խորտակէ ծաղիկները, կողոններն ու ցողերը, եւ բոլոր յոյսերը կոչնչացնէ:

Այսպէս մարդիկ իրենց առջեւ պատկերացող մեծ ուրախութեանց նօթապարտութեամբ զէպի մեծ աշխարհներ կը փութան. բայց իսկոյն իրականութեան կը վերադառնան կտորած թեւերով, երկրին վրայ տատանող թռչուններուն նման, տխուր աչքերնին զետիւր խոնարհած: Բայց, մինչդեռ արցունքը այտերէն վար կը հոսի տակուտին իր կրած յուսախաբութեան համար, անա նոյն պահուն իր առջեւ կը ներկայանայ արդէն յուսոյ աստուածունին: Նորէն զեղտցին իր սերմերը կը ցանէ, նորէն երիտասարդ, այր ու ձեռուրի իրենց նոր ծրագիրները կը հիւսեն եւ իրենց օգային նոր պայտանները կը կառուցանեն:

Բայց երջանիկ է մարդը, քանի որ իր մէջ կը կրէ այսպէս մղում մը որ երբէք չի մարեր: Ինչ պիտի արժէր ամենէն լաւ ու գեղեցիկ բանը երկրիս վրայ, է՛նչ պիտի արժէր բարեկամութիւնը, սէրը, կթէ՛ մըշտատեւ երկրիդը զուարթ ու երջանիկ մարդը ցնցէր, ու բարութեան բաժակը ձեռքէն իջնար, իւրաքանչիւր բոպէին ուրախ ժամերուն հետացումը սպասելով: Բայց յոյսը փայլ կուտայ երջանիկին ակնարկին, որ գերեզման կիջնայ ծաղիկներ քաղելով յաճախ:

Կամ կարելի կըլլար միթէ՛ ասանց յուսոյ տոկալ տառապանքի ու նեղութեանց: Արչափ անտանելի ու ծանր պիտի ըլլար մարդուն վիճակը վտանգներու ու ազլաններու մէջ, եթէ իր սրտին խորը յուսոյ նշոյլը չի պահէր, յոյսը լաւագոյն օրերու վերայ:

յայտութիւնով պարոնը զարմացմամբ նայեցաւ իր ընդդիմադիտութիւնը որ թող տուաւ իրեն հակառակ կարծիք յայտնել այնքան պարզ բանի մը համար եւ ըսաւ:

— Կաղաչեմ պարոն Կովտարով, Պուլկարի մէջ կուտուր ինչ օգուտ բերաւ:

— Միշտ աւելի լաւ մը ինձմէ եւ ձենէ՛, ր Պուքրէջ նստած հանգիստ, ժամանակին կըսպաննենք, ազգային տառապաններուն վրայ անխիղճ քննադատութիւններ ու ստոր զըրպարտութիւններ ընելով:

Դեղնած Կովտարովը շտապունեցաւ: Դա Պուքրէջի Յեղ. Կովտարի անդամներէն էր:

— Ա, պէ՛, մաճարի գլխարկով սա երկայնահասակը չըլլայ, ըսաւ յանկարծ Կրօպով, եւ մատովը սրճարանին դիմացի անկիւնը ցոյց տուաւ, չորս հոգի նստած էին եւ մէկը կեցած ձեռքերովը բան մը կը պատմէր:

— Ա՛հ Մաքէտոնսօֆին է ան, գոչեց ճաթած այտով պարոնը:

— Այնտեղ ուրիշ սրիկաներ ալ կան պատուուն զգեստներով, մոմաց Կրօպով, իր միակնոցով գիտելով:

— Այո, գիտէք որո՞նք են A propos սա պարոն Կովտարովի ազգային տառապաններուն նկատմամբ ունե-

Քաղցր ու երջանկաւէտ ոգի, քեզ կը պարտի աշխարհ եւ իւրաքանչիւր անհատ իր գեղեցիկ ժամերը. քու զօրութիւնդ է որ մարդուն համբերութիւն, կորով ու տոկունութիւն կը պարգեւէ յարմար ժամուն: Ամբողջ ազգեր քեզ կը պարտին իրենց պոթութիւնը: Դուն ուժ կը պարգեւես աշխատաւորի բազկին, որ իր ճակտին քրտինքով իր սիրելիներուն հարկատր հացը ձեռք կը բերէ, Դուն մանկան եւ երիտասարդին քայլերը կերպրես պատուոյ ու գիտութեան աւարտէզիս մէջ: Դուն ամուր կը բռնես նաեւ զիս ընտրած ասպարէզին մէջ: Ապագան մութ է իմ առջեւ: Շատ դառն օրեր ինձի կը սպասեն թերեւս, եւ սիրելիներու աչքը հոգածու խնամքով մը կը յարի իմ վրաս: որ հետու աշխարհի մէջ նպատակիս հասնիլ կը ջանամ, եւ հաստատ չեմ զիտեր թէ ե՞րբ կամ ո՞ւր իմ փնտրած նպատակս պիտի գտնեմ: Սակայն, դու զիս չես լքաներ եւ տխուր վայրկեաններուս ալ հետս պիտի ըլլաս, գեղեցիկ Յոյս:

Թարգմ. Գնրմ. ԲԱՉՈՒԿ Վերթմակերկ

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՒՆԻԿ

Մուշի առաջնորդ Տէր Եղիշէ վարդապետ իմացուցած ըլլալով Պատրիարքարանին թէ կարգ մը նետտրականներ, 40—45 ընտանիքի չափ, կը փափագին հոյ եկեղեցւոյ դաւանանքներն ընդունիլ, հրահանգ խնդրած էր Ս. Պատրիարքէն, Կրօն. ժողովը իր որոշումը տալէ առաջ կարգ մը մանրամասն տեղեկութիւններ պահանջէր է Տ. Եղիշէ վարդապետէն:

— Վիէննայի մէջ Տ. Յովհաննէս հաննան պատրիարքարան տե-

ցած խոնդավտութիւնը պիտի պաղեցնէ:

— Կր ճանչնա՞ք ստոնք, հարցուց Կրօպով:

— Անցած օր ինձ ցոյց տուին: Ազ երեքը կը տեսնե՞ս, յարթ մը կայ ըւշադարիտէն (՝) արձակեցին, ուր ամբողջ երեք տարի պատկած էին:

Չորս վիճարանողները հետաքրքրութեամբ աչքերնին աստուց վրայ ուղեցին:

— Ինչո՞ւ համար բանտարկուած էին: Անպատճառ գողութեան մը համար է: Ճաթած այտով ու աչքերու սպուռ արտայայտութիւնով պարոնին զէմքը գոհունակութեան փայլեցաւ, անհոգ ծայրը բերնին Կովտարովին նայեցաւ գրգռիչ տեսքով մը ու ըսաւ:

— Չեղի պատմեմ, ասի վէպ է, էօժէն Սիւ հոս պէտք էր պար նիւթի փնտրելու: Աս ազգային տառապանները երեք տարի առաջ, գիշեր մը Պրսիլի մէջ Բէթրէսօֆ քասան կը կոտորեն, քասայի փականքը տեսակ մը գործիքներով կը բանան եւ մէջէն երկու հազար նարուէօն կը հանեն հնչուս դրամ եւ պօնօ:

— Հը՛, հը՛, այս գողութիւնը այդ ժամանակը լսեցինք, ընդմիջեց Կրօ-

զեկացուցած ըլլալով որ խաթ վարդապետին հասցէով սնտուկ մը գտնուած է, որուն մէջ կան յիշեալ վարդապետին սեպհական կրօնական զգեստներն ու գործիքները, Կրօն. ժողովը յանձնարարեց Երուսալի հոգեւոր հովի Իւթիւճեան եպիսկոպոսին խնդրին ճշգրութիւնը ստուգել եւ պէտք եղածը հաղորդել խաթ վարդապետին:

Խաթ վարդապետին վերաբերեալ յիշեալ սնտուկը մաքսէն հանելու համար Գիւրքճեան անուն յանձնակատարը 93 ֆիօրին վճարած է եղեր, եւ հիմա 500 ֆիօրինի կուզէ ելեր ծախել:

Լսուած ին նայելով յիշեալ վարդապետը զգեստները ձգած եւ իարիզ դալով աշխարհականի պէս կը պտտի եղեր:

— Պիթլիսի առաջնորդ Չիլինկիրեան վարդապետ յուլիս 13ին տեղւոյն խնդրակատար վանքին որբանոցը եւ կեդր. վարժարանը այցելելով, հրաժեշտի մաղթանքներ կարդացեր է եւ 18 ին ճամբայ ելեր է գէպի Պօլիս: Յիշեալ վարդապետը այլեւս այն կողմերը վերադառնալու գիտաւորութիւն չունի եղեր:

— Եղիպտոսի առաջնորդ Տէր Յովսէփ եպիսկոպոս Պատրիարքարանին հաղորդած ըլլալով որ Ափրիկեան Տրիպոլիսի մէջ հայերը հոգեւոր հովիւ չունենալով կրօնական միաթիւրութեան զուրկ կը մնան, Կրօն. ժողովը յանձնարարեց Այվազեան եպիսկոպոսին քահանայ մը զրկել այդ կողմերը:

— Վահրամ եպիսկ. Մանկունի առաջարկեր է Կրօն. ժողովին Ուսումն. խորհրդոյ կազմական կանոնագրին մէջ անցնել տալ

պովը, — Ինչ ասոնք են ոստիկանութեան ձեռքակալած ազգային տառապանները:

— Այո, սեսսաներդ — ճիշտ իրենք են, ոչ սխտոր կերած եւ ոչ հոտածի պէս են — պատուաւոր մարդիկ եւ միանգամայն ազգային:

Ու ճաթած այտով պարոնը բարձր քան քան մը ձեցց:

— Կր կարծեմ որ փոխանակ աս ինկած մարդիկներու գծախառնութեան վրայ ծաղրելու, աւելի խղճարուելու ու ցաւակից ըլլալու ենք...

— Երեք տարի Բուլքարիան... Սոսկալի բան է, սա մարդիկ կարեկցութեան արժանի են... Իրենց յանցանքը հատուցում ստացած է, տխրութեամբ ըսաւ համակրելի երիտասարդը:

Կովտարով կը լռէր:

Ճաթած այտով պարոնը որ յաղթական զէմքով կը գիտէր Կովտարովի յայտնի ալալութիւնը նորէն շարունակեց:

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

(Շար. ունակելի)

(՝) Ռոմանական անուն որ բանաւ կը նշանակէ:

ձայնագրութեան հետ ազգային ձայնագրութիւն և կրօնական ձայնագրութիւն ալ: Կրօն. ժողովը որոշեց է այդ մասին խորհրդակցել ուսումնական խորհրդին հետ:

— Նպաստից յանձնաժողովը որոշեց է իր յառաջիկայ նստին մէջ զբաղիլ գաւառներուն մէջ բացուելիք արհեստանոցներով: Յանձնաժողովը քննեց է Մուշի որբանոցին վերաբերեալ կարգ մը խնդիրներ և որոշեց է այդ խնդիրներուն կարգադրութիւնը յանձնել նոր ընտրուելիք Մուշի տեղապահ Տ. Խորէն վրդ. Պէհեկեանի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Սուլթանը առարկելով որ ֆրանս. կառավարութեան պահանջներուն մասին պէտք եղած խոստումներն ու ապահովութիւնը տուած է արգէն, կուզէ վերջնական Քարափներու մասին բանակցութիւնները և առաջ կը բերէ ամէն տեսակ առարկութիւններ:

Սուլթանը յանձնաժողով մը կազմեց է, որուն կը մասնակցին ընդհ. դատախազը, օրէնսդիր խորհրդականը և ուրիշ դատաստանական պաշտօնեաներ, ֆրանսացի դրամատէրներուն պահանջներու խնդիրը քննելու համար: Այս յանձնաժողովին առաջնութեամբ այն տպաւորութիւնը ձգեց է որ Սուլթանը կուզէ կարելի եղածին չափ քաջքշել խնդրին լուծումը:

— Պէհեկեանը Լոյս կիմանայ թէ թուրք թնդանօթաձիգներու ընդհ. քննիչ, Սէյֆուլլահ փաշա ֆորժու գացեր է սպայակոյտին բազմաթիւ անդամներով:

Սէյֆուլլահ փաշա օսմ. կայսրութեան Ադրիականի ծովեզերքներուն ամբողջութիւնները աչքէ պիտի անցնէ, նկատի ունենալով վերջին դէպքերը և Իտալիոյ ու Աւստրո-Հունգարիոյ կատարած ծովային ցոյցերը: Եպիբոսի մէջ արգէն իր քննութիւնները վերջացուցեր է և պիտի սկսի Ալպանիոյ մէջ ալ, որ վերջերս թրքական հողերուն ամենէ աւելի զբաղեցնող մասը կը կազմէ:

— Յօլսէն կը հեռագրեն թէ ելեւտական այն յանձնախումբը որ թուրքիոյ տնտեսական վիճակին մէջ բարենորոգումներ մտացնելու պաշտօն ունէր, ոչ մէկ իրագործելի ծրագիր չի կրնալով գտնել իր առջև, լուծուեր է:

— Անցեալները ելուրդի մէջ ծագած հրդեհին պատճառաւ, պալատին մարդերէն 700 հոգի ելեմէն արտորուեր են Միւրվէթ շոգենաւով:

— Մօնթէնէկրօի Պօլսոյ գործակաւորը, Պաքիչ, ելուրդ գիւմեր է յայտնելու համար որ 20,000 ալպանացիներ պարաստուած են ոչ միայն Մօքրա գիւղին վրայ, յարձակիլ ինչպէս կանխաւ իմացուցած էր, այլ ամբողջ Գարատաղի սահմանին վրայ: Պաքիչ հաստատապէս խօսք առաւ թէ պէտք եղած միջոցները պիտի գործուորուին այդ դէպքին առաջ քն առնելու համար:

— Պօլսոյ յունաց դեսպանը Սուլթանին ունկնդրութեան արժանանալով վերջնականապէս խօսք առեր է Յունաց թագաւորին Պօլիս տյցելութեան պաշտօնապէս ընդունելութիւն կատարուելուն համար:

— Ռուսական «նօւօթի» թերթը Մակեդոնիոյ խնդրին կարգադրութեան ստիպողականութեան մասին խօսելով, կըսէ որ միակ գործնական լուծումն է Մակեդոնիոյ և Հին Սերպիոյ մէջ քրիստոնեայ կուսակալ մը կարգել, որ այդ գաւառները կառավարէ քրիստոնեաներէ ու թուրքերէ կազմուած խառն ժողովի մը աջակցութեամբ:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Ամսոյս 29ին Սօֆիայի մէջ տեղի ունեցեր է Մակեդոնական Քօնկրէն, 120 պատուիրակներու ներկայութեան որոնք Պուլկարիոյ այլ և այլ կողմերէն եկած էին: Քօնկրէն զբաղեցրէ առժամեայ կօմիտէին տեղակազրով և մնայուն կօմիտէի ընտրութեամբ:

— Նախարարութիւնը հիմայ փոխառութեան դիտաւորութեանէն հրաժարած է կրօնէն, մասնաւորապէս Գարափէլօֆ հարկ չի տեսներ այլ ևս փոխառութեան, քանի որ այս տարուան հունձքերը յուսացուածէն աւելի յաջող են և պիտի կրնան մեծ արդիւնք տալ:

Հանգուցեալ կրթական նախարար Սլավէյքօփի տեղ դիտաւորութիւն կայ ուրիշ Գարափէլիստ մը անցնել, ի վան Կէօրկօփ, որ Սօֆիայի համալսարանին փիլիսոփայութեան ուսուցիչն է: Եւ սակայն անհամաձայնութեան պատճառները չեն վերցած Գարափէլօփի, Յանքօփիստներու և զօրավար Փափրիքօփի միջև, որոնց առաջինը ծայրայեղ ռամկավարական, միւսները ծայրայեղ ռուսասէր են, իսկ վերջինը իշխանին սիրելին:

— Անցեալ շաբթու թուրք և պուլկար սահմանազուլիսի վրայ կախ մը ծագեր է երկու տէրութեանց սահմանապահ զօրքերուն միջև: Թուրք զօրքերը հրացան պարպեր են պուլկարներուն վրայ երբ անոնք կը պտտէին: Կախը երկու կողմէ սաստկացեր է, և

չորս տաճիկ սպաննուեր ու 5 հոգի վիրաւորուեր են: Տաճկական երկու վաշտեր հալածեց են պուլկարները, որոնք միայն քանի մը հոգի են եզեր և Սարը Թաշըսուած պուլկարական հողք գրաւեց են: Պուլկար պատերազմական նախարարը Ֆիլիպէի զօրաբաժնին հրամայած է անմիջապէս զօրք ճամբայ հանել, որպէս զի պուլկարական այդ տեղը տաճիկներէն ետ առնուի:

Պուլկարիոյ արտաք. գործոց նախարարը խստիւ դիմում րբեր է թէ Մէլհամէի և թէ ուղղակի տաճիկ կառավարութեան:

— Օգոստ. 21ին, գիշերուան ժամը 12 1/2ին, Եուսուփի մէջ, ազգով հրէայ Ֆարին ելրարց տան պատահանին առջեւ ռումբ մը նետուեր է: Ռումբին ահեղ պայթումէն թալին բոլոր բնակիչները արթնցեր են, իսկ անոր սարսափելի ցնցումէն կտորեր են շուրջը գտնուած բոլոր տուններուն ապակիները: Կըսուի թէ նոյն օրը, ցերեկին Ֆարին ելրարյները նամակ մը ընդունած են, որով իրենցմէ կուզուի եղեր 500 ռսկի, հակառակ պարագային սպանալիք ընելով:

Ի Տ Ա Լ Ի Ա

Իտալիոյ նախկին նախարարապետ Քրիսթի, որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, մեռեր է Նաբօլիի մէջ: Ետ գմնդակ հոգեվարք մը ունեցեր է, որ սաստիկ տանջեր է նախկին նախարարապետը:

Քրիսթի 36 տարուան առօրեայ յիշատակագիրը պահած է իր կեանքին, և ր անշուշտ շատ հետաքրքրական մասեր կը պարունակէ իր մէջ:

Ա Ւ Ս Տ Ր Ի Ա

Փրանս. փողէֆ կայսրը, որ ըստ սովորականին ամառուան մէկ մասը Իշլ կանցնէ, բնաւ հանգիստ չունի: Նախարարները շարունակ կայցելեն զինքը ընթացիկ գործերուն տեղեակ պահելու համար զայն և անոր խորհուրդներն ու հրամաններն ստանալու համար: Քօնդ. Կլուսօփքի, որ Փրանսայէն վերադարձած էր մօտաւորապէս Իշլ պիտի մեկնի կայսր հետ արտաքին գործերու մասին տեսակցելու համար, մասնաւորապէս գերմանական վերջին մաքսային ծրագրին, Ագրիականի նոր խնդրին և առհասարակ Պալքաններու վիճակին վրայ:

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Անգլ. դեսպանը իր պաշտօնակիցներուն յայտներ է որ, դաշնագրին ստորագրութիւնը յապաղելուն պատճառաւ, իր զօր-

քերը չի պիտի կրնայ հեռացնել օգոստ. 15ին:

«Թալմա» թղթակիցը կըսէ թէ Անգլիա չի համաձայնիր որ նոր պայմանագրութեան համար կազմուելիք յանձնաժողովէն մէջ Իտալիա, Սպանիա, Աւստրիա, Հոլանտա, որոնք շատ ջնջին վաճառականութիւն մը ունին Չինաստանի հետ, այնքան ձայն ունենան հոն, որքան ինք, Անգլիան:

— Եունկ. Չուի եւ Նիու. Եունկի մէջ ռուսերէն յայտարարութիւններ փակցուցեր են, ուր կը հրաւիրեն ժողովուրդը միայն ռուս իշխանութեանց գիմել օգնութիւն կամ պաշտպանութիւն խնդրելու համար: Արովհետեւ այդ գաւառներն ռուսական պաշտպանութեան տակ կը գրտնուին:

Ռ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Ռուսներու մէջ հրէից գաղթականութեան հոսանքը վերակուեր է: 200 հոգի վերջերս Բրօնշդատ, Պէրլին և Ամերիկա անցեր են: Պուքրէշի և Եաշի բազմաթիւ հրէայ վաճառականները Պուտափէշտ փոխադրուեր են, Ռումէն կառավարութեան նոր հալածանքներէն վախնալով:

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

1902 դեկտեմբերին Գահերէի մէջ պիտի գումարուի բժշկական մեծ ժողով մը, որ Արեւելքի մէջ ցարդ գումարուածներուն ամենէն մեծը պիտի ըլլայ: Այդ ժողովը Եւրոպայի համար մեծ նշանակութիւն պիտի ունենայ, որովհետեւ հոն պիտի վիճարանուին մասնաւորապէս քոլերաի, ժանտախտի և ուրիշ համաճարակներու դէմ գործադրուելիք միջոցներու վրայ, հիւանդութիւններ որոնք առհասարակ Արեւելքէն Եւրոպա կուգան, Խտիւր յիշեալ ժողովը պիտի հովանաւորէ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Անգլիական թերթերը կը գրեն թէ Լօրտ Քիչնէր սեպտեմբերի կէսին Անգլիա պիտի երթայ վերջին յայտարարութիւնը գործադրութեան մտնելուն պէս: Անկէ ետքը պատերազմը դադարած պիտի նկատուի, և իր տեղը պիտի անցնի տեղակալ Նէվիլ Լիթլիթըն: Միւսներն ատեն Լօրտ Միլնէր պիտի ձեռք առնէ իր գերագոյն քննիչի պաշտօնը Հարաւ Ափրիկէի և Թիանսիպալի մէջ:

Отговорникъ:

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ — Варна